01.06.23 - 01.06.23
17:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակ

ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի և արհեստակցական կազմակերպության նախաձեռնությամբ **ս. թ. հունիսի 1-ին՝ ժամը 17:00-ին, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակում** տեղի կունենա միջոցառում՝ նվիրված Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան:

Համերգային ծրագրով հանդես կգան ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի մեներգիչները և «Համալսարանական» թատրոն-ստուդիայի սաները:

Միջոցառման ընթացքում կհնչեն սիրված և ճանաչված մուլտֆիլմերի երգերը, կանցկացվի կավճանկարչության մրցույթ, երեխաները «Ուրախ գնացքով» կշրջեն համալսարանի ողջ տարածքով: Երեխաներին շնորհավորելու կգան ճանաչված մուլտհերոսներ, ինչպես նաև կլինեն բազմաթիվ անակնկալներ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am